ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հ/Հ	Առաջադրանքները ըստ ներկայացման ձևի	Ենթաառաջադրանքների քանակը	Միավորը
1	Ընտրովի պատասխանով	20	20
2	Կարճ պատասխանով	16	16
3	Ընդարձակ պատասխանով	1	4
	Ընդամենը	37	40

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԸ

1. **Բառապաշար**
2. **Բառակազմություն**
3. **Ձևաբանություն**
4. **Շարահյուսություն**
5. **Թարգմանություն**
6. **Կապակցված խոսք գրելու հմտություն**

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թեստը բաղկացած է 9 առաջադրանքից (37 ենթաառաջադրանք):

1-4-րդ առաջադրանքները (20 ենթաառաջադրանք) ընտրովի պատասխանով առաջադրանքներ են: Ընտրովի պատասխաններով ենթաառաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

Առաջին առաջադրանքում տրված է տեքստ և դրա վերաբերյալ 5 ընտրովի պատասխաններով ենթաառաջադրանքներ՝ պատասխանի չորսական տարբերակներով, որոնցից պետք է ընտրել ճիշտ տարբերակը:

Առաջին առաջադրանքին տրվում է առավելագույնը 5 միավոր:

Երկրորդ առաջադրանքը կազմված է 8 նախադասությունից, ամեն նախադասության համար տրված է քերականական տարբեր կարգեր արտահայտող չորսական տարբերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտ տարբերակը:

Երկրորդ առաջադրանքին տրվում է առավելագույնը 8 միավոր:

Երրորդ առաջադրանքը կազմված է 3 նախադասությունից: Տրված են հայերեն նախադասություններ և յուրաքանչյուր նախադասության համար տրված է թարգմանության չորսական տարբերակ, որոնցից պետք է ընտրել թարգմանության ճիշտ տարբերակը:

Երրորդ առաջադրանքին տրվում է առավելագույնը 3 միավոր:

Չորրորդ առաջադրանքը կազմված է 4 նախադասությունից: Նախադասությունները տրված են ուղղակի խոսքով և յուրաքանչյուր նախադասության համար տրված է ուղղակի խոսքի փոխակերպման չորսական տարբերակ, որոնցից պետք է ընտրել ուղղակի խոսքի փոխակերպված ճիշտ տարբերակը:

Չորրորդ առաջադրանքին տրվում է առավելագույնը 4 միավոր:

5-7-րդ առաջադրանքները (16 ենթաառաջադրանք) կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ են: Կարճ պատասխան պահանջող առաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

Յինգերորդ առաջադրանքը կազմված է փոքրիկ պարբերությունից: Նախադասություններից դուրս են բերված բայեր: Բայերը պետք է տեղադրել ճիշտ ժամանակաձևերով:

Յինգերորդ առաջադրանքին տրվում է առավելագույնը 5 միավոր:

Վեցերորդ առաջադրանքում տրված է 5 նախադասություն, որոնցում կա ավելորդ բառ: Այն հնարավորություն է տալիս ստուգելու քերականական տարբեր երևույթներ: Պահանջվում է գտնել յուրաքանչյուր նախադասության ավելորդ բառը և դուրս գրել:

Վեցերորդ առաջադրանքին տրվում է առավելագույնը 5 միավոր:

Յոթերորդ առաջադրանքում տրված է 3 նախադասություն, որոնք պետք է գրել կրավորական սեռով:

Ցանկացած տեսակի 2 և ավելի սխալների դեպքում միավոր չի տրվում:

Յոթերորդ առաջադրանքին տրվում է առավելագույնը 3 միավոր:

Ութերորդ առաջադրանքում տրված են հարցերի պատասխանները և պահանջվում է կազմել ճիշտ հարց յուրաքանչյուր պատասխանի համար:

Ութերորդ առաջադրանքի ճիշտ պատասխանները կարող են լինել տարբեր, կախված այն բանից, թե աշակերտը ինչպես է ձևակերպել հարցը: Եթե հարցը քերականորեն և շարահյուսորեն ճիշտ է ձևակերպված տրվում է 1 միավոր: Ցանկացած տեսակի 2 և ավելի սխալների դեպքում միավոր չի տրվում:

Ութերորդ առաջադրանքին տրվում է առավելագույնը 3 միավոր:

Իններորդ առաջադրանքում տրված 10 բառերից առնվազն 7-ով պետք է կազմել կապակցված տեքստ (5-7 նախադասություն):

Այս առաջադրանքը գնահատվում է հետևյալ չափանիշներով.

1. *Բառապաշար:* Եթե բառիմաստները ճիշտ են արտահայտվել և կա բառիմաստի ոչ ավելի, քան 1-2 սխալ՝ տրվում է 1 միավոր: 3 և ավելի սխալների դեպքում միավոր չի տրվում:
2. *Ձևաբանություն: Ձևաբանության* գործածության համար տրվում է 1 միավոր: Ձևաբանական 3 սխալ գործածության դեպքում միավոր չի տրվում:
3. *Շարահյուսություն*: Եթե նախադասությունների շարահյուսությունը ճիշտ է և կա ոչ ավելի, քան շարահյուսության 2 սխալ՝ տրվում է 1 միավոր: Շարահյուսության 3 և ավելի խախտումների դեպքում միավոր չի տրվում:
4. Ուղղագրություն: Ճիշտ ուղղագրության և մինչև 5 սխալի դեպքում տրվում է 1 միավոր: 6 և ավելի տառասխալի դեպքում միավոր չի տրվում:

Ութերորդ առաջադրանքի կատարման համար տրվում է առավելագույնը 4 միավոր:

Կապակցված խոսքը չի գնահատվում, եթե՝

- խոսքը չունի ամփոփ, ավարտուն տեսք, սկիզբ, միջին մաս, ավարտ,
- նախադասությունների քանակը 5-ից պակաս է,
- գործածված չեն տրված բառերից առնվազն 7-ը:

Ամփոփիչ վերջնական միավորը ստացվում է լուծված առաջադրանքների միավորների գումարից (առավելագույնը 40 միավոր), որը համապատասխանեցվում է գնահատման 10 միավորանոց համակարգին՝ համաձայն հետևյալ սանդղակի.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

ՄԻԱՎՈՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆ
0-3	1
4-7	2
8-11	3
12-16	4
17-21	5
22-26	6
27-33	7
34-37	8
38-39	9
40	10